

ՀՀ ԳՐԱԳՆԱԳՐՈՒՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՐՈՒՄ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
Հ Ա Ն Դ Ե Ս

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

1998, № 1—2 (147—148)

ԱՌԱՆՁՆԱՏԻՊ
ОТДЕЛЬНЫЙ ОТТИСК

ԴԱԴԻՎԱՆՔԻ ՆՈՐԱՀԱՅՑ ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՏՊԷԼԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ա. Հ. ՀԱԿՈՒՅԱՆ, Հ. Ե. ՍԻՄՈՆՅԱՆ

Գրիչ Դավիթ հպիսկոպոսը 1606 թ. իր ընդօրինակած Ավետարանի վերջում բավականին մանրամասն նկարագրում է XVII դարի սկզբի թուրք-պարսկական ընդհարումների արյունոտ դրվագները: Այստեղ մասնավորապես նշվում է, որ Գեղարքունիքի իշխան Մելիք Շահնազարը, օսմանցիների հալածանքներից խույս տալու նպատակով, իր ժողովրդի մի մասի հետ փախչում է Սար և Տպէլ: «Յորժամ եղև զարուն, այս բարէմիտ եւ իմպատուն իշխանս պարուն Մէլիք Շահնազարս, իմացաւ զոխս սրտից Օմար ազգին, հրամաւ արար երկիրս թէ «Եկայք մտցուք յամուրս, զի մի լիցուք կոխան այլազգաց» եւ ինքն զնաց ի Սար եւ ի Տպէլ: Եւ որք զհետ նորա զնացին, զերծաս ի սրտէ եւ ի գերութենէ այլազգեաց: Եւ յետ սակաւ աւուրց ելին զօրքն Կանչայու ի վերայ Գեղամայ երկրիս, զոմանս կոտորեցին, եւ զոմանս գերեցուցին Գ(Յ) անգամ, թողին մեծ սուք եւ կսկիծ մեզ ամենեցուն»¹:

Հիշատակարանի ենթատեքստը հուշում է, որ այստեղ հիշատակված Սար և Տպէլ տեղանունները կարող են հանդիսանալ ինչպես բնակավայրեր, այնպես էլ գավառներ²: Միջնադարում քաջածանոթ վարչական և հոգևոր կենտրոն Սար ավանը գտնվում է Տրտուի (Թարթառի) կիրճի ձախակողմյան բարձրավանդակի վրա, ուստի տրամաբանական է, որ Սարս գավառի ներքո առաջին հերթին ընկալվել է Տրտուի վերին գետահովիտը: Տպէլի տեղադրությունը մինչ այժմ ոչ միայն անհայտ է, այլև ընդհանրապես չի արծարծվել գիտական գրականության մեջ: Սիջնադարյան սկզբնաղբյուրներից մեզ հայտնի են Տպէլ անվան ևս երկու հիշատակումներ, սակայն արդեն որպես անձնանուն: Սարգիս վարդապետ Զալալյանցը Դադիվանքի գալթում հիշատակում է այժմ չպահպանված մի տապանաբար, որի վրա գրված է եղել՝ «Այս է տապան Սարգսի որդու Տպէլայ, ի թվին հայոց :Զևհ: (1293 թ.)»³: Հաջորդ վկայությունը գտնում ենք գրիչ Բարսեղի ընդօրինակած Ավետարանի 1417 թ. հիշատակարանում. «... յիշեցէք ի ՔՍ զԱռաքել քահանայ եւ զամուսինն իւր զՀերիքն եւ զհայրն նորա զԱմիրն եւ զմայրն նորա զԲրուզն եւ զեղբայր նորա զՏպէլն, զՄիսիթարն, հարեղբայրն զԽոցաղեղն եւ զլուսակն՝ զՅակոբն...»⁴:

1 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժէ դար, հ. Ա, Երևան, 1974, էջ 218—219:

2 Միջնադարյան դրավոր արյուրներում Սար երկիրը հիշատակվում է ավելի հաճախակի, քան Սար ավանը: Բջնիի Սուրբ Աստվածածին եկեղեցու 1031 թ. արձանագրությունում Սարը վկայվում է որպես գետանուն, որի ներքո ամենայն հավանականությամբ պետք է ընկալել Տրտու գետը:

3 Զ ա լ ա լ ե ա ն ց Ս ա Ր Գ ի ս վ ա Ր Գ ա պ ե տ. Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան. մասն Բ, Տիֆլիս, 1842, էջ 223: Ս. Բ ա Ր խ ու ո դ ա Ր յ ա ն. Գիվան հայ վիմագրության, սրբակ 5. Արցախ, Երևան, 1982, էջ 215 (որդայ բառը վրիպակով ներկայացրել է որդի ձևով):

4 ԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401—1450 թթ.), կազմեց Լ. Խաչիկյան. Երևան, 1955, էջ 205:

Վերոհիշյալ գրավոր աղբյուրներից զատ Տպէլ անունը հիշատակվում է նաև Դադիվանքի նորահայտ արձանագրությունում, որը պարունակում է սոհմագրական, տեղագրական, շինարարական և պատմական կարևոր տեղեկություններ: Այն հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հուշարձանների պահպանության վարչության⁵ Հայկական հուշարձանների համահավաքի իմբաստանության՝ ազատագրված տարածքների պատմամշակութային արժեքները ուսումնասիրող արշավախմբի կողմից (ղեկ. Հակոբ Սիմոնյան), որը 1993—1997 թթ. համակողմանի ուսումնասիրություններ կատարեց նաև Դադիվանքում⁶:

Դադիվանքի պարսպապատ հատվածի կառույցները իմբավորված են երկու դարավանդների վրա: Վերին՝ հյուսիսային դարավանդը, զբաղեցնում են պաշտամունքային կառույցները՝ եկեղեցիները, գավիթը, զանգակատունը, տապանատունը, սյունասրահը, նշխարատունը, իսկ հարավային դարավանդում տեղադրված է աշխարհիկ կառույցներից բաղկացած համալիրը՝ տաճարը, վանականների բնակելի տները, սեղանատունը խոհանոցով, հյուրատունը, մառանը, հնձանը: Արձանագրությունում հիշատակված տները և սրահը զբաղեցնում են դարավանդի ծայր արևելյան հատվածը՝ արևելքից և հարավից եզերված խոր ձորակներով, հյուսիսային մասով հպված բնական դարավանդին, արևմուտքից՝ տաճարին: Կառուցված է ճեղքված տարասեռ քարերով և կրաշղախով: Բաղկացած է եղև հատակագծում ուղղանկյուն 3 սենյակներից, որոնցից մեկը, թերևս սրահ⁷ անվանվածը՝ զմբեթավոր է, երդիկով և մեկ սյունով: Ըստ ճարտարապետ Հ. Սանամյանի, սրահին արևելքից և հարավից կցված են եղև երկու թաղակապ սենյակներ, որոնցից հարավայինին արևմուտքից կցված է կամարակապ բացվածքով նախասրահ: Արևելյան սենյակը հետագա վերակառուցումների ժամանակ բաժանվել է երկու մասի և դարձվել երկհարկանի: 1888 թ. Դադիվանքը փակելուց հետո տեղի մահմեդական բնակիչները այս շինությունը օգտագործել են որպես գոմ: Այժմ կառույցը գտնվում է կիսաքանդ վիճակում. ծածկերը և երկրորդ հարկի հատակները փրված են, պատերը՝ խարխլված: Արձանագիր բարավորի քարը ամրացված է թաղակապ սրահի հարավային մուտքի սլաքաձև կամարի ներքո, արտաքին պատերից ներս ընկած դիրքով: Թերևս որպես գոմ սրահի օգտագործումը և բարավորի քարի «քողարկված» լինելը եղև են արձանագրության անհայտ մնալու պատճառները:

Արձանագրությունը փորագրված է ղեղնավուն տուֆաֆելզիտային ապարից կերտված բարավորի ճակատային, սրբատաշ մակերեսին: Հինգ տողից բաղկացած արձանագրությունը ձգվում է կամարաձև՝ կիսաբոլոր քարի պարագծով (կիսաշրջանի բարձրությունը 79 սմ է, ներքին եզրի երկարությունը 150 սմ): Կազմված է 5 սմ բարձրությամբ բոլորգիծ երկաթագիր տառերից: Հարուստ է կցագրերով և հապավումներով: Տողերը միմյանցից անջատված են տողագծերով (միջտողային հեռավորությունը 2 սմ), իսկ առաջին տողը վերևից և ներքևից եզերվում է ուլունքաշար հիշեցնող զարդագուտիով՝ բաղկացած տակառաձև և շրջանաձև զարդերի հաջորդական շղթայից: Բարավորի քարի ստորին եզրի կենտրոնական մասում քանդակված է կիսաբոլոր ութաթև վարդյակ (տրամագիծը 28/32 սմ), իսկ վերին մասում, սլաքաձև կամարի ներքո՝ մեկ այլ ութաթև վորք (տրամագիծը 6 սմ) վարդյակ: Պահ-

5 Այժմ Հայաստանի Հանրապետության Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության Հուշարձանների պահպանության վարչություն:

6 Արձանագրությունը հայտնաբերվել է 1993 թ., արտանկարվել 1994 թ. Վահան Գալսեթյանի կողմից, իսկ այնուհետև հեղինակները տեղում ուսումնասիրել և վերծանել են այն:

7 Սրահ—գառիթ. հրապարակ ապարանից զկնի նախաբան, յոր նախ մտանէ եկեայն, ևս ապա անտի ի ներքս, ևս այս թէ յարկաւ ծածկեալ իցէ, ևս թէ անյարկ. ևս մեծ սենեակ ասեմի. ժողովարան. դահլիճ (տե՛ս Բառագիրք Հայկազեան լեզուի, հ. երկրորդ, Կոստանդնուպոլիս, 1846, էջ 690):

պանվել է ամբողջությամբ, բարվոք վիճակում, թեև առանձին տառեր հողմ- նահարված են, իսկ քարի մակերեսը ծածկված է մրի շերտով:

ՅՈՒՍՈՎՆ ԱՅ ԵՄ ՏՐ ԳՐԻԳՈՐԷՍ ԵՒ ՏՐ ԱԹԱՆԱՄ ԵՂԲԷՐ ԻՄ, ՈՐԴԻՔ ՀԱՍԱՆ ՊԱՐՈՆԻ, ՇԻՆՑՅԱՔ ՉՏՆԵՐԼԵՍ ԵՒ ՉՍՐԱՀՍ: ԵՒ ԱՐԴ ԱՂԵՐՍԻԻ ՀԱՅ- ՅԵՄ, ՈՐ ԶԿՆԻ ՄԵՐ ՏԱՂԱԽԱՐԻ ԱՍՏ, ՅԻՇԵՍՅԷ ԶՄԵԶ ՅՈՂՈՐՄԱՍԻՆ ԱՅ: ԸՆԴ ՆՄԻՆ ՀԱԻՐԵՂԲԱՅՐՆ ՄԵՐ ՏՐ ԳՐԻԳՈՂԻ, ՆԱՅԵԻ ԶԵՂԲԱՐՍՆ ՄԵՐ ԵՒ ԶԺԱՌԱՆԼՆԵՂԻՎՈՐԻ ԳԻՔ ԱՅՍՄ ՏԱԼՆՍ. ԶՏՊԷԼՆ ԵՒ ԶՇԱԼՈՒԱՅՆ ԵՒ ԶԳՐԻԳ, ՊԱՀԵՍՅԷ ՔՍ ԸՆԴ ԵՐԿԱՅՆ ԱԻՈՒՐՍ, ԵՒ ՈՎ ԶՄԵԶ ՅԻՇԷ, ԻՆՔՆ ԼԻՅԻ ՅԻ- ՇԵԱԼ ԱՌԱՋԻ ՔԻ:

Այստեղ խոսքը գնում է Հաթերքի, Հանդաբերդի, Խաչենաբերդի և Հա- վախաղացի տեղ Հասան Մեծ իշխանի որդիներ Գրիգորէսի և Աթանասի շի- նարարական գործունեության մասին: Որ դրանք իրոք Հասան Մեծի որդի- ներն են, հավաստում է նաև հորեղբոր՝ տեղ Գրիգորի անվան հիշատակումը, որի վանահայրության ժամանակ Հասան իշխանը իր բերդերը և գավառները հանձնում է որդիներին, իսկ ինքը որպես կրոնավոր հաստատվում Դադի- վանքում, իր եղբայր տեղ Գրիգորի մոտ⁸: Տեղ Գրիգորէսը և տեղ Աթանասը XIII դարի գործիչներ են: Այս բազմասնյակ շինությունը կառուցվել է տեղ Գրիգորէսի 1211 թ. կառուցած տաճարին կից⁹: Ճարտարապետական դիտար- կումների համաձայն, խիստ որոշակի է, որ տաճարի կառուցումը նախորդել է բնակելի տների շինարարությանը, հետևաբար այն եղել է 1211 թ. հետո, թերևս 1211—1214 թթ. միջակայքում, երբ դեռ կենդանի էր Դադիվանքի առաջնորդ, Հասան Մեծի եղբայր Գրիգորը: Դատելով արձանագրությունից վերջինս հիշատակվում է ողջերի թվում, մինչդեռ 1214 թ. Արզու Խաթունի կառուցած Սուրբ Կաթողիկեի շինարարական ընդարձակ արձանագրությու- նում տեղ Գրիգորը այլևս չի հիշատակվում¹⁰: «Որ ԶԿՆԻ ՄԵՐ ՏԱՂԱԽԱՐԻ ԱՍՏ» հատվածում կտրտորները դիմում են իրենցից հետո այս տներում տաղավարողներին, այն է՝ բնակվողներին¹¹: Քանի որ տեղ Գրիգորէսը և նրա եղբայր տեղ Աթանասը բարձրաստիճան հոգևորականներ էին, որոնք տեղ Գրիգորից հետո հաջորդաբար դարձան Դադիվանքի առաջնորդներ, որոշակի է, որ նրանց կառուցած տները նախատեսված էին որպես բարձր- աստիճան վանականների բնակարաններ և որ նրանցից հետո այստեղ պետք է բնակվեին դարձյալ վանքի առաջնորդները: Հետևաբար, որոշ վերապահու- մով, այս կառույցը կարելի է համարել առաջնորդարան: Կառույցի ֆունկ- յիոնալ նշանակության մասին մեր առաջ քաշած վարկածը հիմնավորվում է ոչ միայն արձանագրության տվյալներով, այլև ճարտարապետական ձևերի և տեղադրության վերլուծությամբ¹²:

8 Ս. Բ ա ռ խ ու ղ ա ռ յ ա ն. Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Արցախ, էջ 198:
9 Նույն տեղում, էջ 212:
10 Նույն տեղում, էջ 198—199:
11 Բառագիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1769, էջ 249: Բառագիրք Հայկազեան լեզուի, 5. երկրորդ, էջ 767:
12 Մուրադ Հասթյանը բավականին մանրամասն նկարագրում է այս կառույցը և ճար- տարապետական այլ համալիրների հետ համեմատելով, հանգում է եզրակացության, որ գմբե- թավոր սրահը ծառայել է որպես զրատուն, իսկ նրան կից սենյակները՝ գրիչների բնակարան- ներ (Մ ու ռ ա ղ Հ ա ս թ յ ա ն. Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը. Երե- վան, 1992, էջ 57—59): Մեր կարծիքով կառույցի ֆունկցիոնալ նշանակությունը պարզելու գործում խիստ կարևոր է արձանագրության հաղորդումը, որտեղ այն նշվում է որպես տներ և սրահ «մեծ սենեակ ատենի, ժուլվարան»: Եթե նախապես այս կառույցը նախատեսված լիներ որպես զրադարան, ապա արձանագրությունում կհիշատակվեր միջնադարում լայն գոր- ծածություն ունեցող զրատուն կամ դպրատուն տերմինով:

Արձանագրության հաջորդ հատվածը մեր կարծիքով տոհմագրական, թերևս նաև տեղագրական արժեքավոր տեղեկություններ է պարունակում. «...ՀԱԻՐԵՂՐԱՅՐԻՆ ՄԵՐ ՏՐ ԳՐԻԳՈՐ, ՆԱՅԵԻ ԶԵՂՐԱՐՄՆ ՄԵՐ ԵՒ ԶԺԱՌԱՂԻՆՅԳՈՐԸ ԴԻՔ ԱՅՍՄ ՏՆԻՆՍ. ԶՏՊԷԼՆ ԵՒ ԶՏԱԼՈՒԱՅՆ ԵՒ ԶԳՐԻԿ...»:



Ինչպես նշեցինք, Տպէլ անունը միջնադարյան աղբյուրներում հիշատակվում է և՛ որպես անձնանուն, և՛ որպես տեղանուն: Շալվա անունը, որը Արցախում խիստ հազվադեպ է հանդիպում, դարձյալ հայտնի է և՛ որպես անձնանուն, և՛ որպես տեղանուն¹³: Շալվա անունով գյուղ և գետ գտնվում են Արցախի Վակունիք գավառում, ներկայիս Քարվաճառը Քաշաթաղից, բաժանող ջրաբաժան լեռնաշղթայից հարավ¹⁴: Դավիթ եպիսկոպոսի վերոհիշյալ հիշատակարանում նշված Ծարը և Տպէլ տեղանունները հանդես են գալիս համատեղ: Տեքստից բխում է, որ վերջինս պետք է գտնվեր Ծարի հարևանությամբ, մի դժվարամատչելի վայրում: Ծարա (Տրտու) գետից հարավ ընկած է շորս կողմից բարձրաբերձ լեռներով շրջափակված, բնականից բացառիկ պաշտպանվածությամբ օժտված Տրտուի աջակողմյան վտակ Տուտխուի (Թութխունի) հովիտը: Մինչև խորհրդային կարգերի օրոք հաղորդակցության ուղիները՝ թունելի և Տրտու գետի վրա կամուրջի կառուցումը, այն փաստորեն կտրված էր արտաքին աշխարհից և արհավիրքների ժամանակ հիանալի ապաստարան կարող էր ծառայել: Լոկ լեռնային դժվարանցանելի արահատներով, այն էլ միայն ամռան ամիսներին, կարելի էր թափանցել այնտեղ: Այնպես որ, Մելիք Շահնազարը ամենայն հավանականությամբ հետապնդումներից խուսափելու համար նախ անցել է Ծար, ապա երբ վտանգը ավելի է սաստկացել՝ Տուտխուի հովիտը՝ Տպէլ: Տպէլ գյուղի և նույնանուն ռավառակի Տուտխուի հովտում գտնվելը վերջնականապես հաստատվում է այս հովտի վերնամասում գտնվող Բաշլիբեյ գետակի և Բաշտիբեյ = Բաշ Տպէլ = Մեծ Տպէլ¹⁵ անվամբ գյուղի առկայությամբ: Վերջինս վկայված է

13 Դիոնս անհասկանալի է ԶԳՐԻԳ անվանումը, որը հեղեցնում է Գրիգոր անձնանունը, սակայն այս բառի վրա բացակայում է սրատվո նշանը, ինչը կասկածի տեղիք է տալիս նման վերձանության համար:

14 Շալվա անձնանունը խիստ հազվադեպ է հանդես գալիս հայկական արձանագրություններում, տե՛ս Գրիան հաջ վիմագրության մատենաշարը:

15 Որոշ աղբյուրներում Մեծ մակդիրով է մեծարվում նաև Ծարը. տե՛ս Սիմեոն Երեմյանի. Զամբռ. Վաղարշապատ, 1873, էջ 283:

XIX դարի և XX դարի սկզբների ուսական պաշտոնական փաստաթղթերում Բաշ Տպէլ անվամբ՝ բնակիչները քուրդ շիխաներ, թվով 176, հողը՝ արքունի¹⁶: Խորհրդային տարիներին Քարվաճառի շրջանի ամենամեծ և գեղատեսիլ գյուղերից մեկի այս անունը աղավաղվելով դարձել էր Բաշլիբէլ:

Այսպիսով մի աղբյուրում Ծար և Տպէլ, մյուս աղբյուրում Տպէլ և Շարվա տեղանունների համադրությունը հիմք է տալիս Տպէլ գավառակը տեղադրել Տուտխուի հովտում: Հետագայում գավառի անվանումը տեղայնացվել է նրա տարածքում գտնվող գյուղերից մեկի, թերևս գավառակի կենտրոնի և նրա մոտով հոսող գետակի անվանումներում: Նույն երևույթին ականատես ենք նաև Շարվա անվանման հետ, միայն թե այս դեպքում անվանումը մեզ է հասել առանց փոփոխության:

Տպէլ ավանի տեղագրութեան ճշտումից հետո ցանկանում ենք առաջ քաշել այն վարկածը, որ Գաղղիվանքի նորահայտ արձանագրության «...ե՛ի ԺԱՌԱՆՆՆՆԵՆԻ ԳՈՐԸ ԼԴԻՔ ԱՅՍՄ ՏԱՆՍ. ԶՏՊԷԼԸ ԵՒ ԶՇԱԼՈՒԱՅՆ ԵՒ ԶԳՐԻԳ...»

հատվածում հիշատակված անվանումները ոչ թե լոկ սովորական անձնանուններ են, այլ հավանաբար հաշնի իշխանության Տպէլ, Շարվա և Գրիգ (?) տները (տոհմերը), որտեղ անձնանունը և տեղանունները (կալվածանունները) համատեղված են, և կամ էլ մեկը մյուսից ածանցվելով հասել են մեզ տեղանունների տեսքով: Այս դեպքում մենք կունենանք թե՛ Տպէլ և թե՛ Շարվա տեղանունների հնագույն, XIII դարի հիշատակումները, որոնցից առաջինը գտնվում է ժամանակակից Քարվաճառի շրջանը Քաշաթաղի շրջանից բաժանող ջրաբաժան լեռնաշղթայի հյուսիսային, երկրորդը հարավային լանջերին:

Ե՛վ Տպէլ, և՛ Շարվա անվանումներում խիստ որոշակի է վրացական աղղեցությունը, որը մեր կարծիքով հաշն է փոխանցվել գրեթե ողջ Հայաստանը ազատագրած Իվանէ Զաքարյանի միջոցով, որը հաշնի իշխանական տան նկատմամբ հովանավորություն էր ստանձնել: Այդ հովանավորությունը արտահայտվում էր նաև խնամիական կապերով: Պատմական ավայրերը և արձանագրություններում առկա անձնանունները վկայում են, որ Իվանի և նրա ժառանգների իրական սեռի ներկայացուցիչներին Արցախի իշխաններին հարս տալը ավանդույթ էր դարձել: Ե՛վ վերջապես նշենք, որ Գաղղիվանքի գավթում թաղված Սարգսի հայր Տպէլը ժամանակակից է նորահայտ արձանագրությանը և թերևս հենց ինքն էլ հանդիսանում է այս արձանագրությունում հիշատակված Տպէլը¹⁷:

¹⁶ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893, Джеванширский уезд, III участок, № 645; Сборник сведений о Елисаветпольской губернии. Сост. И. Л. Сегаля, Тифлис, 1902, с. 170—171; Пагирев Д. Д. Алфавитный указатель к пятиверстной карте Кавказского края..., Тифлис, 1913, с. 34 (տես նաև տարամասշտաբ բարտեզները):

¹⁷ Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է զպէլ տիտղոսը (տե՛ս Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսական. Մոսկվա, 1861, էջ 260): Օգտվելով առիթից մեր շնորհակալություն ենք հայտնում Պ. Մուրադյանին, Պ. Զորբանյանին և Ս. Սաղումյանին արձանագրության վերծանման վերաբերյալ կատարած դիտողությունների համար: